ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի ապրիլի 18-ի, ժամը 14:00-ի նիստի
N 6 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** («Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 22.02.2023, N 33 (7924)) **մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սոս Վիրաբի Խաչիկյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան:**

Զեկուցողները նշեցին. «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2023 թվականի փետրվարի 22-ի N 33 (7924) համարում **հայտարարվել է մրցույթ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար**, որին կարող են մասնակցել ամբիոնի մասնագիտական ուղղվածությանը համապատասխան գիտությունների դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 5 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2023 թվականի մարտի 20-ին ռեկտորին դիմում է ներկայացրել մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Սոս Վիրաբի Խաչիկյանը**: Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը նշեց. Ս.Վ.Խաչիկյանը ծնվել է 1975 թվականի օգոստոսի 30-ին Տավուշի մարզի Կոթի գյուղում: 1981-1992 թթ. սովորել և ավարտել է Կոթիի միջնակարգ դպրոցը: 1993-1998 թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համասարան) ֆինանսահաշվային ֆակուլտետը՝ «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությամբ: 1998-2002 թթ. սովորել է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության Տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտի հեռակա ուսուցման ասպիրանտուրայում:

2002 թվականին Ս.Վ.Խաչիկյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2009 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Ս.Վ.Խաչիկյանը ունի տվյալ բնագավառում հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 42 է (1 ուսումնական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 1 մեթոդական ցուցումներ, 3 ձեռնարկ (խմբի ղեկավար), 2 հետազոտություն՝ համահեղինակությամբ, 1 հետազոտություն (խմբի ղեկավար), 27 գիտական հոդված՝ հրատարակված ՀՀ գիտական ամսագրերում, որից 7-ը՝ համահեղինակությամբ (այդ թվում 1-ը անգլերենով), 3 գիտական հոդված՝ հրատարակված միջազգային գիտական ամսագրերում, որից 1-ը՝ համահեղինակությամբ):

Աշխատանքային գործունեությունը: Ս.Վ.Խաչիկյանը 01.09.1998 - 01.09.2002 աշխատել է Տավուշի մարզի Կոթի գյուղի միջնակարգ դպրոցում որպես ֆիզիկայի ուսուցիչ, 15.09.2003 - 06.07.2011՝ «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ում որպես առաջատար տնտեսագետ, 07.07.2011 - 12.07.2012 եղել է ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, 12.07.2012 - 13.07.2017՝ ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի տնօրեն՝ մրցույթով անցնելու կապակցությամբ, 13.07.2017 - 02.07.2018՝ մասնաճյուղի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար, 02.07.2018 - 23.11.2018՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, 23.11.2018 - 31.01.2023՝ ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկան՝ մրցույթով անցնելու կապակցությամբ: 2023 թվականի հունվարի 31-ից նշանակվել է մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար: 01.09.2012 - 29.06.2019 Ս.Վ.Խաչիկյանը համատեղությամբ դասավանդել է Եղեգնաձորի մասնաճյուղում, 01.09.2019 - 01.02.2023՝ մակրոէկոնոմիկայի ամբիոնում:

Ս.Վ.Խաչիկյանը մինչև 2011 թվականը դասավանդել է ՀՀ տարբեր բուհերում, եղել է միջազգային ու տեղական մի շարք ծրագրերի փորձագետ, աշխատել է ՀՀ Ազգային ժողովում: Պարբերաբար մասնակցել է տարբեր միջազգային ու տեղական վերապատրաստումների, գիտաժողովների, կրթական ու հետազոտական ծրագրերի:

Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը նշեց, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի ամբիոնի 2023 թվականի մարտի 30-ի նիստում (արձանագրություն N 10) քննարկվել է մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Ս.Վ.Խաչիկյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 14-րդ կետի համաձայն ներկայացրած ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի, գիտամանկավարժական գործունեության արդյունքների և ամբիոնի վարիչի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Ս.Վ.Խաչիկյանը ներկայացրել է մակրոէկոնոմիկայի ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել ամբիոնի դոցենտներ Ծ.Ջ.Կարապետյանը, Ա.Գ.Հակոբյանը, Կ.Հ.Գրիգորյանը, Ռ.Ս.Ղանթարչյանը: Նրանք նշել են, որ ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդը համապատասխանում է ամբիոնի վարիչի պաշտոնին ներկայացվող պահանջներին, 2018 թվականից դասավանդում է մակրոէկոնոմիկայի ամբիոնում, որի շրջանակներում նրան ճանաչել են մարդկային, մասնագիտական և կազմակերպչական բարձր հատկանիշներով: Նաև նշել են, որ վերջին 2 ամիսների ընթացքում, որպես ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ցուցաբերել է նախաձեռնողականություն ամբիոնին վերաբերող մի շարք հարցերի շրջանակում, որը կարևորվել է աշխատակիցների կողմից: Ելույթներից հետո ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ամբիոնի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 12, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0: Քվեարկությանը չի մասնակցել Ս.Վ.Խաչիկյանը) մակրոէկոնոմիկայի ամբիոնը երաշխավորել է Ս.Վ.Խաչիկյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի

քվեարկությանը՝ մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2023 թվականի ապրիլի 6-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 14): Ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է մրցութային հանձնաժողովի նիստի բաց քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սոս Վիրաբի Խաչիկյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Պրոֆեսոր Ա.Հ.Սարգսյանը գիտական խորհրդի անդամներին հորդորեց հաշվի առնել ամբիոնի և մրցութային հանձնաժողովի նիստերի որոշումները:

Զեկուցողներից հետո Սոս Վիրաբի Խաչիկյանը ներկայացրեց մակրոէկոնոմիկայի ամբիոնի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը, դոցենտ Մ.Վ.Բադալյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սոս Վիրաբի Խաչիկյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն (գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 50-ը. կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ՈՐՈՇԵՑԻՆ.-

Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի ամբիոնի վարիչի ընտրության ընթացակարգի» 35-րդ կետը, մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական

խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 1 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 50, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Սոս Վիրաբի Խաչիկյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. ապրիլի 18
Երևան